

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայ օգնության ֆոնդի Երեխաների աջակցության կենտրոնը փնտրում է դասընթացավարներ՝ ՀՀ Լոռվա, Սյունիքի, Արարատի մարզերում, ինչպես նաև ք. Երևանում թեկնածու խնամատար ծնողների համար դասընթացներ վարելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններ.

- Վարել դասընթացը առկա հետևյալ մոդուլներով.

I օր

Խնամատարությունը՝ որպես ընտանիքահեն այլընտրանքային խնամքի մոդել. էությունը, կազմակերպումը, անհրաժեշտությունը, տիպերը

II օր.

Խնամատարության կազմակերպման գործընթացը (փուլերը)
Թիմային աշխատանքի կարևորությունը այս գործընթացում

III օր

Երեխայի իրավունքների ընկալումը և իրացումը խնամատարության համատեքստում
Երեխայի պահանջմունքները
Կապվածություն և դեպրիվացիա

IV օր

Երեխայի զարգացման տարիքային առանձնահատկությունները և խնամք իրականացնողների ծնողավարման անհրաժեշտ հմտությունները
Երեխաների արդյունավետ դաստիարակությունը՝ նրանց ճանաչելու միջոցով

V օր

Երեխաների հանդեպ բռնությունները. ճանաչումը և մեկնաբանումը
Հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի առանձնահատկությունները

VI օր

Խնամատարության ազդեցությունը խնամատար ընտանիքի վրա

- Իրականացնել անցկացված դասընթացների արդյունավետության գնահատում առկա մեթոդներով
- Ներկայացնել հաշվետվություն դասընթացի արդյունքների վերաբերյալ

Հիմնական պահանջները.

- Բարձրագույն կրթություն, ցանկալի է՝ հասարակական գիտություններում
- Երեխաների պաշտպանությանն առնչվող դասընթացներ վարելու առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ
- Մայրենի լեզվի գերազանց իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Կարողությունների զարգացման գերազանց հմտություններ
- Պատասխանատվություն և հաշվետվողականություն
- Հաղորդակցության գերազանց հմտություններ
- Ժամանակի կառավարման հմտություններ
- Միջանձնային և կազմակերպչական հմտություններ
- Ուսուցանելու, ուղղորդելու և առաջնորդելու ունակություններ
- Մեծահասակների լսարանում շփման, ներկայացման և մոտիվացնելու գերազանց հմտություններ
- ՀՀ տարածքում գործուղումների մեկնելու և ճկուն գրաֆիկով աշխատելու ունակություն

Ծրագրի մասին

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՄԵՖ) կողմից համաֆինանսավորվող «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթական ծառայությունների ընդլայնում» (2014-2019թթ.) ծրագրի նպատակն է՝ երեխայի խնամքի համակարգի ընթացիկ բարեփոխումների շրջանակներում աջակցել ՀՀ կառավարությանը՝ երեխայի ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքն ու համայնքահեն սոցիալական և կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու գործում:

Ծրագիրն իրականացվում է Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի, «Սեյվ դը Չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան գրասենյակի, «Վորլդ Վիժն Հայաստան»-ի և «Հոյսի կամուրջ» -ի կողմից:

Դիմելու կարգը

Հետաքրքրված անձինք կարող են ուղարկել իրենց CV-ները հետևյալ էլ. հասցեով՝ elenharutyunyan@yahoo.com՝ նամակի վերնագրում նշելով «Դասընթացավար ...օրվա/մոդուլի համար»:

Վերջնաժամկետը դեկտեմբերի 7-ն է: